ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ՀՄԱՅԻԼ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին թուրքերի կազմակերպած ցեղասպանության հետեւանքով աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի բեկորներն իրենց հետ երկրագնդի տարբեր անկյուններ են տարել նաեւ տասնամյակներ, անգամ դարեր շարունակ իրենց օջախներում կամ համայնքներում պահվող, սրբություն դարձած հայկական ձեռագրական ժառանգության բազում նմուշներ: Դրանց մի մասն այժմ գտնվում է տարբեր ձեռագրական եւ թանգարանային հաստատություններում, իսկ մի մասն էլ շարունակում է դեռեւս մնալ սեփականատերերի ժառանգների մոտ: Ձեռագրերը պահվում են մեծ պարտավորվածությամբ, եւ, որպես կանոն, տերերը խուսափում են խոսել ձեռագրերի մասին:

Այսպիսի բախտի է արժանացել այժմ Ախալցխայում հանգրվանած՝ Գրիգոր գրչի կողմից 1683 թվականին գրված մի Հմայիլ, որի մասին տեղեկացանք շնորհիվ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մեր աշխատակից Սիրանուշ Ասպատուրյանի: Վերջինս իմանալով, որ ես զբաղվում եմ Հմայիլների ուսումնասիրությամբ, հայտնեց իր ազգականի տանը պահվող ձեռագիր Հմայիլի մասին, եւ, խնդրանքս չմերժելով, հարմար առիթով ուսումնասիրելու համար Հմայիլը հանձնեց ինձ:

Սիրանուշը սիրահոժար պատմեց Հմայիլի ճակատագրի մասին: 1915-1916 թվականների ջարդերի ժամանակ գաղթելով Էրզրումից՝ Մանո տատը Հմայիլը իր հետ բերել էր Ախալցխա, ուր հաստատվել էր իր ամուսին Մկրտիչի հետ: Հմայիլն ունի դեղին մանր ծաղիկներով կապույտ գործվածքից կշտապանակ, որը մնացել էր Ախալցխայում: Մկրտիչ պապն ու Մանո տատը Հմայիլը հանձնել են իրենց որդուն՝ Զորիկին, որը վաղուց մահացել է: Իսկ Հմայիլը այժմ գտնվում է Զորիկի կնոջ՝ ութսուն տարեկան Վարդուհու խնամքի ներքո: Վարդուհու սկեսուրն ու սկեսրայրը իրենց հարսին պատգամել են՝ Հմայիլը ոչ մեկին չտալ, տանից էլ չհանել. «Ըսիգ Աստծու թաթիգն է, ոչ ոքի չուդա՛ք, չբանա՛ք, չփչացնե՛ք»: Երկու անգամ է Վարդուհին պատգամը խախտել՝ ի բարօրություն Հմայիլի. առաջին անգամ 2006 թվականին, երբ Սիրանուշ Ասպատուրյանի կողմից բերվել է Մատենադարան՝ նորոգման նպատակով, իսկ երկրորդ անգամ՝ մեր ուսումնասիրության համար, ինչի համար խորապես շնորհակալ ենք տիկին Վարդուհուն:

Ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ Հմայիլի կտորները նորոգման ժամանակ ճիշտ հերթականությամբ չեն ամրացվել, իսկ մեր ուսումնասիրությունից հետո, ստանալով տիկին Վարդուհու համաձայնությունը, 2011 թվականի նոյեմբերին կտորները ճիշտ կարգով դասավորվեցին, եւ վերանորոգվելով Մատենադարանում, իրենց նախնական տեղը գրավեցին:

Այժմ օգտվելով մեզ ընձեռված հնարավորությունից, ներկայացնենք Հմայիլի նկարագրությունը՝ իր նախնական տեսքով:

ԴԱՎԻԹ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀՄԱՅԻԼ

ՌՃԼԲ. եւ 1683

ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր:

ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամա-հիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 399,2՝9,4-9,8 (բաղկացած է իրար սոսնձուած 12 կտորից. 27,5+18,5+42,2+41,8+41,3+41,3+41,2+-30,4+21,6+8.3+43+42,1): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (7,7-7,8սմ): ԳԻՐ՝ նոտրգիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ. ԳՈՒՅՆԵՐԸ՝ կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, սեւ, ոսկի:

ՎԻՃԱԿԸ՝ բաւարար: Սկզբից եւ միջից պակասաւոր (տե՛ս բովանդակութիւնը): Նորոգուած 2006 թուականին: Վերջին նորոգումը 2011 թուականի նոյեմբերին, որի ընթացքում կարգաւորուել է կտորների հերթականութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ եւ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Ա. [Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոս, զոր արարեալ է տեառն Ներսիսի Հայոց Կաթուղիկոսի - Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ...] ///[խոնարհեց]ար ի հայրական ծոցոյ եւ առեր զմարմին... տո՛ւր ինձ զիմաստ[ութիւն զբ]արիս խորհել եւ խօսի[լ]/// [եւ ի գնա]լ ի ճանապարհ ի ննջել եւ յառ[նե]լ, զի իմ երբէք սասանեցայց եւ ող՞... միանձանց, հրեշտակաց եւ հրեշտակապետաց եւ ամենայն երկնային զօրացն եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատրէն (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան. ամէն:

1. Քրիստոս (շրջանակում)

2. ԺԲ. առաքեալք (շրջանակներում՝ երկուական վեց շարքով)

3. Խաչելութիւն

Բ. Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ վասն աղանդաւորաց եւ վասն դատաստանի աջողելոյ եւ վասն քաղցրութեան եւ երեսբախտութեան. ամէն եւ Թագաւոր հզօր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց... ծառայիս Աստուծոյ Գրիգորին օգնական եղիցի եւ պահապան. ա[մէն]: Զար իշխանքն հալածին... Աստուա՛ծ, լո՛ւր աղօթից իմոց, ունկն դի՛ր բանից բերանոյ իմոյ:

4. Աստուածամայրը՝ մանուկ Յիսուսը գրկին

Գ. Աղօթք սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին եւ Աստուածածին ամէնաւրհնեալ ըզպաղատանս մեր ընկալ... փրկել ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին, Զտին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան ամենայն չարէ, պահեսցէ յերեւելի եւ աներեւոյթ թշնամոյն, պահեսցէ Տէր Աստուած զծառայն. ամէն: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս:

5. Գրիգոր Լուսաւորիչ

Դ. Աղօթք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. ամէն եւ Խնդրեմք ի քէն, հա՛յր պատուական՝ Լուսաւորիչ ազգի մարդկան... եւ ի բարին առաջնորդեայ ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին, Զտին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան ամենայն չարէ, պահեսցէ յերեւելի եւ աներեւոյթ թշնամոյն. ամէն: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս:

6. Ստեփանոս Նախավկայ

Ե. Աղօթք սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ Ի քէն հայցեմք արտասուագին Նախավկայ Տեառն արարչին... ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատրին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն)... աւգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր:

7. Յովհաննէս Մկրտիչ

Զ. Աղօթք սրբոյն Յովաննու Կարապետին եւ Այլ եւ բարեխօսութեամբ սրբոյն Յովաննու Կարապետին Մովսէսի, Ահարոնի... փրկեա՛ զծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին

(աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն)... տեսցեն անելիք իմ եւ ամաչեսցիեն, զի դու, Տէ՛ր, օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս:

Ծնթ. 4-7 մանրանկարներն առնուած են շրջանակների մէջ, իսկ դրանց յաջորդող բնագրերը (Գ-Զ.)՝ երկուական շրջանակների մէջ: Շրջանակների հատման մասերում՝ արտաքինից պատկերուած են բուսական զարդանախշեր:

8. Զոհաբերումն Իսահակայ

Է. Աղօթք սուրբ հօրն Աբրահամու եւ սուրբ Նարեկացոյն Ասացեալ [Բան ԽԱ.]

եւ Եւ էառ Աբրահամ զորդին իւր՝ զՍահակ... եւ Սահակն ծերացեալ ալեօք ծաղկեցաւ եւ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս: Բարեխօսութեամբ նահապետին հօրն մերում՝ Աբրահամու պահեա՛ եւ փրկեա՛յ զծառայս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն), օգնական եղիցի. ամէն:

եւ Որդի Աստուծոյ կենդանոյ, աւրհնեալդ ամենայնի... աւրհնեալդ ի բարձունս եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ Սրբո[յ փառք յաւ]իտեան[ս. ամէն]///:

Ծնթ. Բնագրերը գրուած են ձախից աջ եւ աջից ձախ թեք՝ խաչուող տողերով, ընդ որում՝ առաջին բնագիրն ամբողջութեամբ գրուած է վերը նշուած ձեւով, իսկ երկրորդի վերջին հինգ տողը գրուած է սովորական:

9. Սուրբ Գաբրիել հրեշտակն առեաւ հոգին

Ծնթ. պահպանուած է մանրանկարի ստորին հատուածը՝ մոտ 2 սմ երկարութեամբ:

Ը. Աղօթք հրեշտակաց պահպանութեան եւ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէ[լ], Դակուէլ... եւ փայտ դառնայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան, ամենայն չարէ պահեսցէ:

Թ. Այս են անուանք հրեշտակաց եւ Սարսիէլ, Սարագմիէլ, Գուրիէլ... Տածիէլ, ուր այս անունքս յիշեն, անդ ոչ մերժենամք

Սուրբ Սարգիս

Տիրամայրը և մանուկ Հիսուսը

Իսահակի զոհաբերությունը

ի ծառայն Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն). ամէն:

Ժ. Աղօթք վասն ճանապարհորդաց եւ Կենդանամայէլ, Կենամայէլ, որ էք ըսպասաւորք Աստուծոյ... ի բարի վաճառս եւ շահաւոր արարէ՛ք սրմա անուամբ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան ամենայն չարէ պահեսցէ. ա[մէն]:

ԺԱ. Աղօթք չար նազարի եւ չար լեզւի. ամէն եւ Հրանիւթ, Հրափայլ, Հրատն, Համատուն... չար զգայարանք պատառի եւ խաւար դառնայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատրէն (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան. ամէն:

ԺԲ. Աղօթք զաւակ ծնելոյ եւ Նայեայ յաղաչանս ծառայիս քո եւ աղախնոյս... եւ ետուր նմայ զաւակ զՄարիամ Աստուածածինն եւ [որ]պես բժշկեցեր զՋուր առ Եղիւ մ[արգարէիւ եւ տո՛]ւր զաւակ ծառա[յիս աստուծոյ Գրիգորին, օգնա]կան եղի[ցի եւ պահապան. ամէն]:

///

ԺԳ. [Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին]. ամէն եւ Բարեխօսութեամբ սուրբ զօրավարացն՝ սրբոյն Գէորգայ զօրավարին... Խարիդեանցն եւ այլ ամենայն սրբոց բարեխօսութեամբն պահեա՛ եւ փրկեա՛ ծառայս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան. ամէն:

ԺԴ. [Աղօթք] եւ Այլ եւ բարեխօսութեամբ սուրբ թագաւորացն Եղեկիայ, Սեղեկիայ, Մանասէի... եւ աստուածասէր իշխանացն բարեխօսութեամբն պահեա՛ եւ փրկեա՛ զծառայս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի. ամէն:

ԺԵ. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի. ամէն եւ Տէ՛ր, Աստուած մարդասէր, մարդասիրի Հօր Որդի... ի սողնոց եւ ի

ճեպեաց եւ ամենայն թիւնաւորաց պահեա՛յ եւ փրկեա՛յ զծառայս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան, ամենայն չարէ պահեսցէ. ամէն:

10. Զիաւոր սուրբ Սարգիս եւ որդին՝ Մարտիրոս

ԺԶ. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին. ամէն եւ Երջանիկ մեծ զօրական եւ Քրիստոսի յաղթող վկայն... ի չար կապից մեծ գերեհան սուրբդ Սարգիս: Հօրն փառք, Որդոյն պատիւ եւ Սուրբ Հոգւոյն այժմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԷ. Աղօթք գլխացաւի եւ աչիչ ցաւի եւ Գայր գետն ի Յորդանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ... ՅԿԵ. (365) ցեղ պեղծ ցաւոց, զոր ազատեալ եղիցի ծառայիս Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում) օգնական եղիցի եւ պահապան. ամէն:

11. Գաբրիէլ հրեշտակապէտ եւ պեղծ

ԺԸ. Աղօթք թպղայի եւ ալի. ամէն եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս եւ սուրբն Գաբրիէլ հրեշտակապետն երթային յեզեր ծովուն... անուանքս յիշեն անդ ոչ մերձենամք ի ծառայն Աստուծոյ Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի. ամէն:

ԺԹ. Աղօթք թպղայի եւ ալի եւ Սուրբն Սիովն, սուրբն Սիսի եւ սուրբն Սի[ս]իանէ... թողէք զանդրանիկ որդին իմ յոր տուն, որ ձեր անուանքն յիշեն, անդ ոչ մերձենամք ի ծառայն Աստուծոյ Գրիգորին Նատերին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) օգնական եղիցի եւ պահապան. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրեցաւ Հէմայիլս ի թվին Հայոց ՌՃԼԲ. (1683) օգոս[տոսի]/// [ի վ]այելումն Գրիգորին Նատարին (աւելացուած ԺԹ. դարում, ջնջած անուան փոխարէն) ///եւ տացէ. ամէն: Հայր մեր, որ՞:

Վերջում՝ ձախ լուսանցքում (ԺԹ. դար, նոտրգիր) Աստուած Քրիստոսի ծառայ Եթա/// ագուն, Ռոգա/// իցի. ամէն: